

## ԽԵՏԵՐԻ ԵՐԵՒԱՆ ԳԱԼԸ, ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՍԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Յարգելի արևելագէտ, Մարտիրոզի Համալսարանի պրոֆ. Ենդէնը իւր մի քանի աշխատութիւնների մէջ ձգնում է ապացուցանել, որ Ասորիքի հիւսիսում և Կիլիկիայի սահմաններում հին ժամանակներում բնակութիւն հաստատած և մեծ իշխանութեան հասած խետերը զանազան հանգամանքներից ստիպուած կամաց կամաց արևելք քաշուեցին և Ուրարտուի թագաւորութիւնը նուաճելով նրանց տեղը հաստատուեցին և որ ժամանակակից հայերի նախնիքները այդ խետերն են. այս կարծիքները արտայայտուած էին նաև Արարատի վերջին համարի պ. Ա. Արեղեանի փոքրիկ բեցենչիայի մէջ վերոյիշեալ պրոֆ. մի ընդարձակ յօդուածի մասին, որը թարգմանուած է Հանդէս-Ամսօրեայի վերջին համարում: Այս պատճառներով անհետաքրքիր չէր լինի ծանօթացնել խետերի պատմութեան հետ, որոնք յաւակնութիւն ունին մեր նախնիքները դառնալու: Հետաքրքրուելով այդ խնդրով՝ վերջրի նշանաւոր արևելագէտ Ե. Մայրոի յայտնի գիրքը՝ *Ceschichte des Altertums* I. տպ. 1884, որը արևելքի պատմութեան համար անգնահատելի նշանակութիւն ունի և թարգմանաբար կազմեցի այն յօդուածը, որով ընթերցողը ծանօթանալով այդ ազգի պատմութեան հետ կգայ առնուազն այն եզրակացութեան, որ յարգ. պրոֆ. Ենդենի կարծիքը բաւական համարձակ է:

Վերոյիշեալ պատմաբանը խօսելով Ասորիքի ժողովրդների տեղաւորութեան մասին (213 էջ) խետերի մասին հետևեալն է ասում. «Արամական ժողովուրդները բաժանուում էին բազմաթիւ ցեղերի, որոնցից նշանաւորագոյնը Խետերն են եղել (Եզիպտերէն Խետա, Ասորեստ. Խատտի, եբր. Խատ): Այդ ցեղի բնակավայրն էր վերին Ասորիք Որոնդէսի հովտում, ուր նորա մի առ ժամանակ մեծ իշխանութեան հասան. Եբրայեցիք

նոցա քանանացի են համարում, ինչ որ յետագայ ժամանակների համար բոլորովին ճիշտ է: Միւս կողմից բազմաթիւ խետական յատուկ անունները, որոնք եզրիպտ. արձանագրութիւնների մէջ պահուած են, քիչ չափով սեմական դրոշմ են կրում. աչքի է ընկնում, որ շատ անունները «ա» տառով են վերջանում: Այժմ ի հարկէ ոչ մի տեղ շփոթութիւնը աւելի հնարաւոր չէ քան այստեղ: Յամենայն դէպս հնարաւոր է, որ մենք Խետայում մի հնազոյն ազգաբնակութեան պատմութիւն լսել կարող ենք, որը ժամանակի ընթացքում սեմականացել է, Բարելոսի հին բնակչութեան նման:

Խետայի յետագայ զարգացման պատմութիւնը քաղում է յարգելի պատմագէտը զլեւտրապէս երկու ալբերներից, աբուն խետական արձանագրութիւններից և յիշատակարաններից, որոնք սփռուած են Փոքր Ասիայում և Նիլիկիայում, բ. Եզրիպտական արձանագրութիւններից, որոնք պատմում են մեզ Փաբաւտների և Խետայի թագաւորների պատերազմների մասին:

Բուն խետական յիշատակարաններից.—«Փոքր-Ասիայի իշխանութիւնները անդադար յարձակում կրելով Խետայի թագաւորներից՝ հաւանորէն երկար ժամանակի համար նուաճուեցան: Նոքա ամեն տեղ Փոքր-Ասիայում իրենց արշաւանքների յուշարձաններն են թողել, որոնք իրենց ոճով շատ նման են Ջերաբիսի յուշարձաններին և մասամբ էլ Համաթական արձանագրութիւնների հետքերն ունին: Այդ յիշատակարանների ծագումը մինչև այժմ առեղծուածային էր, բայց Ջերաբիսի երևան գալուց յետոյ, դոզա մասին ոչ մի կասկած լինել չի կարող: Դոցա բնորոշ յատկութիւններից է հագուստը, բարձր սրածայր գլխարկը և կողաւոր կոշիկը, սովորաբար կիսադէմ և հպարտորէն ձգած ոտներով են նկարած:— (Եր. 199) Բաբելական քաղաքակրթութիւնը մուտք է գործել մասնաւորապէս Խետայի թագաւորութեան մէջ և այստեղ քիչ փոփոխութիւն եկրել. ինչքան որ մենք Ջերաբիսում և Փոքր-Ասիայում գրանուած Խետայի ուրիշ յիշատակարաններից դատել կարող ենք, նրանց արուեստը աւելի կոպիտ է քան բաբելականը և Ասորեստանինը. այստեղ մարդկանց դիմագծերը աւելի խոշոր են, քան Գուտեայի արձաններում և գործի մէջ աւելի հոգատարութիւն ոչ մի մասում չի կարելի հանդիպել:— Այս կարգի յուշարձաններից են՝ մի բարձրաբանդակ արձանադրութեամբ հանդերձ Իբրեզի մօտ մի ժայռի վրայ Նիլիկեան Տաւրոսի հիւ-  
 ԼՈՒՄԵՑ

սիսային լանջերում (Քուրրիստայի մօտ): Այդտեղ մի իշխան  
 Հարուստ ասորեստանցեաց տարազով իւր առաջ կանգնած ող-  
 կոյզներ և հասկեր կրող Աստուծուն աղօթում է. այնուհետև  
 արձաններ մի հին շինութեան պատի վրայ խփիստանում, Քա-  
 րալիտիս լճի մօտ՝ Խաւրիսում և մի մարտիկի գէմք Իգո-  
 նիսյում: Այս կողմերից Խետայի զօրքերը մտան բուն Փռիւ-  
 գիա և մինչև Եգէական ծովափերը հասան: Մի ժայռի վրայ  
 Գեաւուրբալէսի բերդից ցած Փռիւգիսյում (Անկիւրիսից հարաւ  
 արևմուտ) քանդակուած են երկու խետացի կտրիճներ, որոնք  
 Եդիպտ. Ուրաղուս օձի ձևով մի բան են կրում զխարկների  
 յառաջակողմում. սրանց բոլորովին նման են նիմֆէոնի երկու  
 յայտնի բարձրաքանդակները Սիպիլիսի մօտ (որոնց մասին յի-  
 շում է Հեր. II. 106), որոնց բեկորներն մօտ համաթական  
 արձանագրութիւններ են մնացել: Այդպէս Սիւպեղոսում, Մագ-  
 նեզիայի մօտ, գտնուում է մի կոպիտ ժայռաքանդակ (որը  
 գուցէ մի աստուածուհի է ներկայացնում, շատ նման նիորէին)  
 միևնոյն նշանագրերով. բայց աւելի նշանաւոր և աւելի հա-  
 յուստ են այն աւերակներն ու արձանները, որոնք Ալլիւսից  
 արևելք Վապադովկիոյ սահմանների վրայ Ուիւք և Բօղաղբօյ  
 կոչուած տեղերում են գտնուում: Այդ տեղ ընկնում են մի  
 մեծ պալատի աւերակները, որոնց մուտքը երկու սփինքսներ  
 պաշտպանում են. պատերի վրայ գտնուում են բազմաթիւ ներք-  
 նաքանդակներ՝ աստուածներ և մարդիկ, առիւծներ, ցուլեր և  
 դոցա հետ նաև (ինչպէս Բօղաղբօյում) երկգլխանի արծիւ  
 Բօղաղբօյում ընկնում են մի հին բերդի աւերակներն (պտե-  
 րիա ? Հեր. I 76) սրբատաշ պատերը մի բարանձաւի ներ-  
 կայացնում են մի երկար թափօր, ենթադրօրէն կրօնական  
 բնաւորութեամբ, իբր յայտնի խորհրդանշան բոլոր այս յու-  
 շարձանների վրայ հանդէս է գալիս արեգակի թևաւոր կիսա-  
 բոլորակը (☉) շրջուած ձևով:

(§ 256) «Այս յիշատակարանները ցոյց են տալիս որոշ  
 կերպով խետերի տիրապետութեան տարածումը. դրքա ցոյց  
 են տալիս նաև, որ այն ժամանակում ոչ թէ Որոնդէսի հովի-  
 տը, այլ Վարկամիշն է եղել Խիտայի թագաւորութեան կենդ-  
 որոնը և գուցէ նա է եղել նրանց թագաւորութեան մայրաքա-  
 գաքը: Այս պատերազմների մասին ընդհանրապէս շատ քիչ տե-  
 նեկութիւններ են մնել հասել. Ոգիսականում (№ 519) ասուած է

Նեոպատուստիկոսը Տելեփոսի որդի Եւրիմելիլուսին՝ Քեսացիների իշխանին՝ սպանել է, մինչնա յետագայում միշտ իշխան Տիւթրանացւոց է անուանուում, պարզ է, որ այստեղ Խետա անուան Տետքն է մնացել: Նոյն ձևով Արշալոյսի որդի Եթովպացի Մեմնոնի մասին եղած յուևնական զրոյցները, որոնց համաձայն նա մի մեծ արշաւանք է ձեռնարկել Պրիամոսին օգնելու համար, Խետացւոց արշաւանքների արձագանք կարելի է համարել: Լեբրոգ. II 106 յիշում է, որ Նիմֆէօնի բարձրաբանդակները որ ինքը Սեսոստրիսին է վերագրում, ուրիշներին Մեմնոնի պատկերներն են համարուած. այլ նաև յոյների պահպանած անոթոջ տեղեկութիւնները այն տիրապետութիւնների մասին Եգիպտացւոց (Սեսոստրի արշաւանքները դէպի Փոքր-Ասիա և Թրակիա) ըայց ամենից աւելի ասորեստանցւոց են վերագրուած. քաղի դրանից, եթէ Լիւդիայի աւանդութիւնը հերակլիտների <sup>1)</sup> թագաւորական ցեղը Բելի որդի Նինոսից ծագած է համարում. պէտք է ենթադրել, որ Ասորեստանի առասպելական ներկայացուցիչները Խետացւոց տեղն են բռնել: Ասորեստանցիք Լիւդացւոց հետ առաջին անգամ 7-րդ դարումն են թշուղակի յարաբերութեան մէջ մտել: Նոյնպէս Լիւդացի Քսանտոսի երկու յամենայն դէպս վերափոփուած հատուկոտորներում, որոնց մէջ Լիւդիայի հերոս Մոպսոսի և Տանտալոսի եղբայրներից Ասկալոսի դէպի Ասորիք (մասն, դէպի Ասկալոն) արշաւելու խօսք կայ, պահուած կարող է լինել մի յիշողութիւն Լիւդիացիների և Խետերի պատերազմների մասին:

Եգիպտական աղբիւրներից փոխադարձ պատերազմների մասին. «40 կամ 50 տարիներում, որ Ամենհոտեբ III-ի մահուանից մինչև Խարեմիսերի գահ ընթացած անցել էին <sup>2)</sup>, Խետերը ձեռք բերին գերիշխանութիւն Ասորիքում: շատ քիչ տեղեկութիւններ ունինք այն պատերազմների մասին, որոնց միջոցաւ Խետերի թագաւորներին յաջողուեց Ռուտէն կոչուած երկիրները ձնել ճանաչելու իրենց գերիշխանութիւնը. թուում է թէ՛ այդ գործը կիսով չափ գլուխ էր եկել, երբ Մետի I-ը Ասորիք արշաւեց: Միևնոյն ժամանակում նորա տա-

<sup>1)</sup> Լեբրակլիտները լիւդիական թագաւորական մի ցեղ են Խետական ծագումով:

<sup>2)</sup> Եգիպտոսի այս թագաւորները այդ երկրի 18-րորդ հատուութեան տնից են:

րածել էին իրենց իշխանութիւնը հիւսիսում. ամբողջ Փոքր-Ասիայում մինչև Զմիւռնիա պատահում են յուշարձաններ, որոնք աներկրայելի կերպով վկայում են նրանց արշաւաններին մասին: Եթէ մէկը հակուի այդ յիշատակարանները Ռամսէս II-ի մեծ պատերազմներին յաջորդող շրջանին ընդհանրապէս վերագրելու, պէտք է լսել եգիպտական տեղեկութիւններին, որոնք վկայում են, որ խետերը արդէն վաղուց են սկսել: Վերոյիշեալ պատերազմի բանաստեղծական նկարագրութեան մէջ, այսպէս կոչուած Պենդանորոսի բանաստեղծութեան մէջ ասուած է Խետերի թագաւորը հաւաքել էր ըլլոր ժողովուրդներին ծովի ափերից սկսած և իւր երկրի ըլլոր գանձերը սպառել էր նրանց ոռձիկ տալու համար: Lepsiusի Denk. III. 187. պատմական տեղեկութեան համաձայն խետացւոց թագաւորի գնդերը գալիս էին Խետաց երկրի ըլլոր սահմաններից, նահարայինի երկրից և ամբողջ Քետի աշխարհից (Քետի ասելով պիտի հասկանալ անկասկած Ասորիքի հիւսիսային կողմերը, այսպէս, հարաւարեւելեան Փոքր-Ասիան կարելի էր զուցէ նաև այս անուան տակ Քիտիս (Kytis) երկիրը հասկանալ արևմտեան Կիլիկիայում (Ptolm. V. 8. 3) հաւանօրէն նաև Վատանեան, Կիլիկեան Ցարոսից հիւսիս), Աւելի ուշ Ռամզէս II-ը հանդէս է գալիս իբր իշխան Քետի, բայց այդ զէպքում ենթարկուած Խետի Մեծ իշխանին: Վերոյիշեալ պատերազմի բանաստեղծական նկարագրութեան մէջ յիշուած են մի կարգ երկիրներ և իշխաններ որոնք Խետերի հետ կապուած կամ հպատակ են: Այսպէս՝ Արատոսի, Խալէթի և Կարկամիշի իշխանները, նաև Անաւկաս երկիրը, որը մեզ անծանօթ է: Մանայ և Ռուքա (Leka) իշխանների երկիրները բեւեռագրերում հանդէս են գալիս Մաշ ձևով, այսպէս է կոչուում Արաբական անապատի մի մասը, Delitsch Paradies 242. Ծնունդը 10, 30, և Լաքի է կոչուում Երատի արևելքն և Կարկամիշի հարաւային կողմում գտնուող տափարակ տարածութիւնը (հմտ. Schröder Ar. 1879) մնացած անուններն են Դարդենի (դժուար թէ Դարդանէրը լինի Կինդոսի վրայ), Պիտաս, Արունա (Մերունա ?) Քասագեն, Աբերէդ, Մուշանագ, որոնք իրենց համապատասխան բացատրութիւն չունին. արևմտեան Փոքր-Ասիայի ցեղերը, որոնք մէջ են բերում լուսաբանելու խնդիրը, ոչինչ չեն պարզում և եգիպտական բնագրերը որևէ յենակէտ չեն ընձեռուում:

«Ռամզէս II-ի 5 բորգ տարում Կաղէսի մօտ պատահած մեծ ճակատամարտում հանդէս են գալիս այդ կիսանկախ օգնական ժողովրդները, ինչպէս երևում է իրենց գեղի իշխանների հրամանատարութեան ներքոյ. միաժամանակ գտնում են օգնական զինքերի բազմաթիւ հրամանատարներ, որոնք մեզ բոլորովին անծանօթ աշխարհների անունով են կոչուած (Աքաւ կամ Աքիւսու, Անաս, Տանիս և ուրիշներ) տեղական հետեակ ամբօխի կենդրոնը, որ 17000 ի էր հասնում, Տասիր անունն է կրում և ենթարկուած է երկու զօրավարների. միաժամանակ գտնում ենք իբր բարձր անշուշտ զինուորական տիտղոս յաճախ գործածուած Բասէն բառը: Ուրիշ շատ բան չգիտենք նոցա պետական կազմակերպութեան մասին: Մայրաքաղաքը եղել է երևի Քատէշը Որոնդի վերայ <sup>1)</sup>: Թագաւորներից ծանօթ են Սափալէլը նորա որդին Մարսերը, վերջինիս որդին Մաթենները, որը Ռամզէս II-ի օրով սպանուում է: Մաթեններին յաջորդում է նորա եղբայրը Խեթագիրը, որին մենք յետոյ պիտի հանդիպենք:» <sup>2)</sup>

Եգիպտացւոց պատերազմը Խեթերի հետ—էգիպտոսի Խաբեմեբե թագաւորը այս նոր կազմակերպուած պետութեան հետ կռիւ չէ մղել. նոյնը պէտք է կարծել նաև նորա յաջորդ Ռամզէս I ի կարճատև իշխանութեան միջոցին: Աւելի ուշ Ռամզէս II-ի և Խեթի թագաւորի միջև կապուած դաշինքը բազորոշ յայտնում է, որ Խեթի մեծ թագաւորների Սափալէլի և Մարսերի ժամանակներում կայացաւ մի բարեկամական դաշնադրութիւն Եգիպտոսի հետ. բայց Ռամզէս I-ի որդին Սեաթ I վճռեց ձեռք բերել Ասիայի վերայ Եգիպտոսի կորցրած գերիշխանութիւնը: Հէնց իւր առաջին տարում արշաւեց նա Շասուի վրայ և հպատակեցրեց Ջարուի խետեմից (գռու) սկսած մինչև Քանանացւոց երկիրը. այնուհետև շարունակելով յարձակուեց Ռուդինու երկրի վրայ. Ենուամբ բերդը տիրեց, նոյնպէս Քաղէշի ամրութիւնը Ամուրի երկրում (այսին-

<sup>1)</sup> Այս քաղաքը գտնուել է Որոնդի մէջ գտնուող մի քիչու վրայ Եմեչայից հարաւ:

<sup>2)</sup> Բազմաթիւ տեղագրական անուններ յիշուած են նաև Ռամզէս III-ի հետ կապուած դաշնադրութեան մէջ, ուր իւրաքանչիւրը իւր գլխաւոր աստուած իբր վկայ է կոչել, դժբախտաբար այդ անունները ոչ մի բանի հետ չի կարելի համեմատել:

բըն ամորանների բաղաբը. որը աւելի յետոյ Նեփթաղիմի սահմանումն ընկաւ. (չպէտք է շփոթել Խետայ զիւաւոր բաղաբի հետ): Ռեմենան երկրի իշխանները հպատակուեցան և յանձնեցին Թագաւորին փայտ Նեղոսի վրայ մի լաստ շինելու, Ռուդինի շատ մեծամեծներ բռնուեցան: Այժմ միայն առաջ է շարժում Խիտայի Թագաւորը: Սետին պարծենում է թէ նորան էլ է յաղթել, մինչ դեռ ոչ մի նշանաւոր հետեանքի չի հասել: Մենք ունինք ժամանակի Խետայ Մինտինք Թագաւորի յիշատակարանները, ուր մենք կարող ենք հաւանօրէն ամենաբիշ նոյնչափ եղիպտացւոց վրայ տարած յաղթութիւնների պատմութիւնները կարգալ: Յամենայն դէպս Սետի բացի Շասու երկրից, ուր նա շատ ջրհորներ և ամրութիւններ շինել տուաւ, ամենաշատ հարաւային Պապեստինը ընդմիշտ իւր վրայ հաստատեց, Հպատակ ազգերի և ժողովուրդների ցանկերը, որ նա և Ռամզէս II-ը և յետագայ Թագաւորները յառաջ են բերում, պատմականօրէն անարժէք են: Ընացած և խիստ անորոշ անունները (ինչպէս Մենտիու Սատէտ, բոլոր հիւսիսի ժողովուրդները և այլն) այն ժամանակ սովորական դարձած, շատ անգամ պարպալէս Դիւտեմէս III-ի ցանկերից արտագրուած են. նոցա կարդի ու ձշտութեամբ ին խօսք լինել չի կարող»

«Սետի I յաջորդ Ռամզէս II-ը իւր Թագաւորութեան երկրորդը տարում ձեռք է առնում ասիական արշաւանքը: Ինչպէս երևում է Պաղեստինը և Ամորի երկիրը վերստին հաստատակարարով գրաւուեցան: Քերինտոսից հիւսիս, Շան դետի վրայ (Նահեր էլ Բէլը, հնում Լիւկոս) հաստատեց Թագաւորը մի յաղթական քարտ, որի մօտ երկու տարի յետոյ մի երկրորդը դրուեցաւ: Երկրորդ անգամ իւր Թագաւորութեան երրորդ տարում յարձակուեց նա ուղիղ Խետայի վրայ: Խետայի Թագաւորը բոլոր իւր դաշնակից կամ հպատակ ցեղերը կանչել և մի հսկայ բանակով կանգնել էր Քադէշի մօտերը. բիշ էր մնացել, որ նորան յաջողուէր եղիպտացւոց յառաջագահները, որի մէջ էր նաև Ռամզէսը, ծուղակի մէջ բռնել և յնչացնել, որովհետև զօրքերի բազմութիւնը, որ նա կանչել էր շտապով՝ ժամանակին չհասաւ ձակատամարտի տեղը: Միայն անձնական բազմութիւնը Թագաւորի, որը պարծենալով հռչակում է թէ մենակ հպարաւորների դէմ է կռուել, երբ բոլորն իրեն թողել էին, կորցում է յաղթութիւնը: Թշնամիները մեղուեցան դէպի Որոնտը, ուր նոքա շաա կորուստներ ունեցան»

Խաչբերի իշխանը քիչ էր մնացել խեղդուէր: Ռամզէս II ք Տըռ չակուս է իրեն կրկին և կրկին անգամ այս յաղթութեան առիթով: Նա այս պատերազմը Լուքսորում կողմնադրուած և իւր գերեզմանի պաշտաման համար Թերէի արևմտեան քաղաքում շինած Ռամէսսէտէի մէջ, Արուսեմնի տաճարում նուրիպում նկարագրել և բանաստեղծութիւն հոգեկել է տուել: մինչդեռ, չնայած որ դա անձնական քաջագործութիւն էր, զինուորական տեսակետից անհետեանք մնաց: Քաղաքի գրաւման մասին ոչ մի խօսք: և եթէ Ռամզէսը հաստատուած է, որ Խետայի թագաւորը դարձրեց իւր ձեռքերը նորան աղաչելու, պէտք է ենթադրել, որ խնդիրը առժամանակեայ բանակցութեան կամ զինադադարի մասին է, որովհետև մենք տեսնում ենք, որ պատերազմը անընդհատ շարունակուած է:

«Պատերազմի շարունակութեան մասին ունինք միայն խիստ կցկտուր տեղեկութիւններ: Միայն մի անգամ գտնուած ենք Եգիպտացւոց թագաւորին հետո, խոր հիւսիսում պատերազմելիս: Տունէրի սահմաններում նահաւարայնի երկրում Խետայի հետ անձամբ պատերազմուած է նա. ինչպէս է եղել, որ նա պղքան հիւսիս է առաջացել, չգիտնք. իւր ութերորդ տարում տեսնուած ենք բացառապէս Պաղեստինի քաղաքները գրաւելիս, որոնցից նամէր Մերօմ, Քարպու Բայիտ — Անատի սահմանում, Տապուր՝ Ամուրի երկրում բոլորովին գրաւուած են: Արեւի յետոյ տեսնուած ենք նորան իւր՝ պատերազմում փորձուած բազմաթիւ որդիների հետ յարձակում գործելիս Սապուլ հսկայ բերդի վրայ: վերջապէս ճնշում է նա ապստամբ Ասկալոնը: Այստեղից պարզ կարելի է տեսնել, թէ ինչպէս եգիպտացիք յետ յետ են ընկրկուած և ի վերջոյ բոլորովին կազմալուծուում: Անկասկած Խետայի թագաւորը պիտի բազմաթիւ յաղթութիւններով պարծենալ կարող էր: Բայց եթէ Ռամզէսը իւր տաճարների արձանագրութիւններում յաղթած ժողովուրդների և քաղաքների անուններն է տալիս, որ իրեն Իխօմէս III ին հաւասարեցնելու համար, Աստուր, Սանկար, Մենոս և Քարաք (Կիլիկիան) անունները չի մոռնում յիշել, որոնց հետ թագաւորը հապիւ թէ մօտիկ շփում է ունեցել, պէտք է կարծել, որ դատարկ պարծենկոտ շաղակրատութիւն է: Մի հայեացքից ցանկերի բոլորովին անկանոն և հին ու նոր անուններ կուսակուելու հանգամանքի վրայ կարելի է իմանալ, որ դոքա ոչ մի պատմական փաստութեամբ չեն:

«Երբ և ինչ պայմաններում խաղաղութիւն է կնքուած, չենք իմանում ինչպէս և շատ անորոշ է ականդուած, թէ եզրիպատացիք Ասորիքի որ մասը իրենց վրայ հաստատեցին. յամենայն դէպս Պաղեստինը ըստ մեծի մասին եզրիպատացւոց մնաց: Մեր ձեռն են ընկել հատուկոտորներ Ռամզէս II-ի յաջորդ Մերեպտախի ժամանակի օրագրութիւնից, որոնց մէջ ինչ որ անց էր կենում Եզրիպտոս ասորական սահմանների վրայ գրի էր անց կացուում. դոցանից հետևում է, որ Գալան Եզրիպտոսէն էր ընկել: Տիրոսը կառավարում է սեփական թագաւորներով. ինչպէս երևում է, և այս բանը հաստատում է Ռամզէս III-ի իշխանութիւնը, որ երկու կողմերը համաձայնութեան են եկել, որ հարաւ. Ասորիք Եզրիպտոսին թողնուի, իսկ Խետացիք ընդհատակ տարածեցին իրենց ձեռքը հիւսիսում»:

«Այդ համաձայնութեան հիման վրայ կարելի եղաւ մի երկարատև խաղաղութիւն հաստատել երկու պետութիւնների մէջ, այնպէս որ շուտով անցան մի մտերիմ դաշինք կնքելու: Ռամզէս II-ի թագաւորութեան 21 տարում Խետացիք թագաւորը (Խետայի) առաջագրեց և ընդունել տուեց Փարաւոնին մի դաշադութիւն բոլոր երկիրների համար. ըստ որում երկու պետութիւնները իրենց ամբողջութիւնը պահպանում էին. կայեցին պաշտպանողական դաշինք բոլոր արտաքին թշնամիների դէմ, փոխադարձաբար պարտաւորուեցին բոլոր աքսորուածներին, որոնք իրենց մօտ ապաստան կփնտոէին, վերահսկել և փախստականներին կամ սահման անցնողներին բռնել ու յանձնել: Այս դաշինքը երկար ժամանակ իւր ոյժը պահեց: 13 տարի յետոյ Խետացիք այդելեց Եզրիպտոսի թագաւորին և իւր աղջիկը նորան կնութեան տուաւ. այսպէս առաջ եկաւ այն՝ սր Պտախ Աստուածը Ռամսէսին ասաց «Խայի օրերից ի վեր մինչև քո օրերը չլուած բան էր որ Եզրիպտոսն ու Խետան մի սիրտ լինէին»:

Խետայի անկումը.— «Երոյիշեալ Ռամզէս III-ը մատնացոյց է անում, որ այդ ժամանակներում տեղի ունեցող բարբարոսների արշաւանքը, որ Եզրիպտոսի սահմանների վրայ կանգ առաւ, առաջ Խետայի թագաւորութիւնը հեղեղեց. ոչ մի կասկած չի կարող լինել, որ այդ արշաւանքն այդ պետութեան կործանումն առաջ բերեց. այնպէս որ երբ 1120 թուերին Տիկլատպիլէզեր I Ասորեստանից իւր արշաւանքները Ասորիքի վայ ուղղեց, այդ պետութիւնն այլ ևս գոյութիւն չունէր»:

միայն Կարկամիշի խետացիք կազմում էին հիւսիսային Ասորիքի փոքրիկ իշխանութիւններից մէկը:—

Էնենբորոզ դարում Կարկամիշի խետայի թագաւորութիւնը գոյութիւն ունէր, միայն նորա իշխանութիւնը խիստ սահմանափակ էր. Դաւիթ թագաւորի ժամանակը Քաղէշը խետական քաղաք էր յիշուում, բայց երևի իւր նշանակութիւնը կորցրել էր զուցէ և բազմաթիւ նուաճումների ժամանակ կործանուած: Ասորեստանցիք միայն Կարկամիշի խետացւոցն են ճանաչում. միւս կողմից խետան այս ժամանակ բոլորովին արամայացած էր:

«876-ին Կարկամիշի խետայի թագաւորը Ասորեստանի Ասուր Նասիրպալին հարկ էր վճարում»:

«Ուլթերորդ դարի սկզբներում Ուրարդուի (Վանի) հզօր թագաւորներից Մինուասը կռիւ է մղում արդէն իսկ բաժան բաժան եղած խետայի հետ և մեծ յաղթութիւններ է ձեռք բերում»:

«Ուլթերորդ դարու վերջերում 767-ին Ասորեստանի Սարգոն թագաւորը խետայի Պեսիրիս թագաւորին գերի է բռնում, Կարկամիշ քաղաքը նուաճում է և այդպիսով խետայի արդէն իսկ վաղուց կազմալուծուած թագաւորութեանը մի վերջ է դնում»:

Ահա խետայի մինչև այժմ յայտնի պատմութիւնը, որ ընթացողը նկատում է, ա. որ խետայի կամ խետիտների անկումը այն ժամանակ է տեղի ունենում, երբ Ուրարտում սեմական հզօր թագաւորութիւնն է հաստատուում. բ. որ խետացիք իրանք սեմացած ժողովուրդ են, մինչ բոլորին յայտնի է, որ հայերը հնդկա-գերմանական են. նոյն բանը հաստատում է և՛ վերոյիշեալ պատմագիրը: Այս երկու հիմունքներից կարելի է հետևեցնել, որ խետերը չեն կարող մեր հայերիս նախայրերը լինել. անունների նմանահնչութիւնը կարող է պատահական լինել, Հայերի հնագոյն պատմութեան մասին թէև համառօտ, բայց շատ հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս մեր պատմագիրը. այս մասին միւս անգամ: